

ւակներն ու ընկերները, եւ վերադարձնէ անոնց ազատութիւնն եւ ստացուածքը, զոր ունէին իրենց բանտարկութիւնէն առաջ: Եւ ասով, զերազնիւ ամիրայ, պիտի ծառայէք մեր տէր Աստուծոյ, եւ մեզ ալ՝ մեծ հաճոյք պիտի պատճառէք եւ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք, որուն համար միշտ երախտապարտ պիտի մնանք Ձեզ եւ պատ-բաստ՝ ինչ որ պէտք ըլլայ ընկելու Ձեր պատուին եւ օգտին համար:

Ասկէ զատ՝ մեր յիշեալ զեսպանին միջոցով կը ղրկենք Ձեզ մեր զոհարեղէններէն մի քանի փոքր նուէրներ: Կը խնդրենք որ հաճիք սիրով ընդունիլ այս նուէրները, ո՛չ թէ իրենց նիւթական արժէքին համար՝ այլ Ձեզ ղրկող անձին անկեղծ սիրուն համար:

Կրնաք նաեւ կատարելապէս հաւատ ընծայել այն ամենուն որ վերը յիշուած մեր զեսպանը մեր կողմէն պիտի ըսէ Ձեզ, իբր թէ մենք անձա՛մբ հաղորդէինք, եւ հաճեցէք՝ պէտք եղած կերպով դոր-ծել, ինչպէս ալ կսպասենք Ձենէ: Հաճեցէք նաեւ մեր նոյն զեսպանը, ինչպէս նաեւ իր ընկերը, մեր պատուին համեմատ մարգասիրաբար եւ ազնուաբար յանձնարարել ու մեծարել: Եւ եթէ ուրիշ բան մըն ալ կուզէք, համարձակ կերպով գրեցէք մեզ:

Տուեալ ի վանս Պորէտի, 3-րդ օրն հոկտեմբերի, Տեառն մերոյ ծննդեան 1380 թուին:

ՊԵՏՐՈՍ ԹԱԳԱՒՈՐ

Վերը զրուած պատճէնն առանց յաւելուածի կամ յապաւումի գրուեցաւ Բարեղոնի յիշեալ սուլտանին գեր(?) ամիրայ Բարկուէային (=Բարկուկ)(1):

* * *

Կերելի թէ այս նամակները զրական արգիւնք մը չունեցան, որովհետեւ կը տեսնենք որ Դարդել այս անգամ ալ զիմած է Կաստիլյայի Յովհաննէս Ա թագաւորին (1379—1390):

Այսպէս՝ 1380 նոյեմբ. 29-ին Դարդել պատիւ ունեցաւ ներկայանալու Յովհաննէս Ա-ին, որ կը գտնուէր Մէդինա դէլ Կամպո, եւ նկարագրելով Հայոց թագաւորին ու պարագաներուն քաջած թշուառութիւնները, ազաչեց

(1) Անուոս մի եւ նոյն դիւանապետն է, որ այս ծանօթութիւնը կաւել-ցրմէն քղրին տակ: